ՏԵՂԵԿԱՆՔ

Հոդված 48. Դատախազի պարտականությունները

1. Դատախազը պարտավոր է՝
1) տիրապետել զբաղեցրած պաշտոնում իր իրավունքներն ու պարտականությունները սահմանող իրավական ակտերին.
2) կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
3) ապահովել պահանջվող մասնագիտական որակավորում և գործնական հմտություններ.
4) իր լիազորություններն իրականացնելիս ապահովել մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը.
5) պահպանել աշխատանքային կարգապահությունը, ինչպես նաև դատախազի վարքագծի կանոնները.
6) պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանել, այդ թվում՝ պաշտոնավարումը դադարեցնելուց հետո.
7) սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում անցնել ատեստավորում և վերապատրաստում.
8) պահպանել սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները:
2. Դատախազն ունի նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:
3. Դատախազը պարտավոր է տարեկան երկու անգամ անցնել Կառավարության կարգով սահմանված թեստավորում՝թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումը պարզելու նպատակով:

Հոդված 53. Կարգապահական պատասխանատվության հիմքերը

1. Դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝
1) իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.
2) դատախազի վարքագծի կանոնները կամ շահերի բախման վերաբերյալ կարգավորումները խախտելը, բացառությամբ սույն օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված կանոնի խախտման.
3) աշխատանքային ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը.
4) սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելը:
5) օրենսդրությամբ սահմանված դեպքերում բժշկական ստուգումից, թեստավորումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելը:
6) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելը:

Հոդված 54. Կարգապահական տույժերը

1. Դատախազի նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ կարգապահական տույժերը՝
1) նկատողություն.
2) խիստ նկատողություն.
3) դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով.
4) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.

5) պաշտոնից ազատում:

1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված տույժը չի կարող կիրառվել առաջին անգամ դատախազի պաշտոնն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման կազմում զբաղեցնող անձանց նկատմամբ: Սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պաշտոնների խմբում ընդգրկված դատախազների նկատմամբ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված տույժի կիրառման արդյունքում նրանք չեն կարող նշանակվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման կազմում:

2. Կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված կարգապահական խախտման ծանրությանը և մեղավորության աստիճանին:

3. Մեկ կարգապահական խախտման համար դատախազի նկատմամբ կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ: Մեկ կարգապահական վարույթի շրջանակներում, անգամ եթե նույն դատախազը կատարել է մի քանի կարգապահական խախտում, դատախազի նկատմամբ կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ:

4. Կարգապահական տույժի ենթարկված դատախազը չի ազատվում նույն արարքի համար օրենքով սահմանված վարչական կամ քրեական պատասխանատվությունից:

5. «Պաշտոնից ազատում» կարգապահական տույժը կարող է նշանակվել դատախազի այնպիսի արարք կատարելու դեպքում, որը վարկաբեկել է դատախազության հեղինակությունը կամ անհամատեղելի է դատախազի պաշտոնի հետ։ ընդ որում՝ սույն օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կամ 6-րդ կետերով սահմանված դեպքերում «Պաշտոնից ազատում» կարգապահական տույժը ենթակա է պարտադիր կիրառման:

6. «Պաշտոնից ազատում» կարգապահական տույժն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարի և դատախազների նկատմամբ կարող է կիրառվել նաև գլխավոր դատախազի նախաձեռնությամբ կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա, որով հիմնավորվում է նշված անձի կողմից տևական ժամանակ իր գործառույթները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի հետևանքով ստորաբաժանման առջև դրված նպատակները և խնդիրներն արդյունավետորեն չեն իրականացվել: